ՎՄՀ Վանաձորի Կիսամարաթոն

Մասնակցության կանոններ

2025 թ. սեպտեմբերի 14 *Վանաձոր, Հայաստան*

1. Կազմակերպչական թիմ

- Ընդհանուր կառավարում՝ «Արմ Մարաթոն» Հիմնադրամ, TriClub Yerevan, «Վահե Մելիքսեթյան» Հիմնադրամ
- Համակազմակերպող՝ Վանաձորի քաղաքապետարան, Լոռու մարզպետարան

2. Երթուղի, Սկիզբ/Ավարտ

- Վազքի ամսաթիվ՝ 2025 թ. սեպտեմբերի 14
- Մեկնարկ և ավարտ՝ ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
- Երթուղի՝ Վանաձորի կենտրոնական փողոցներ
- Մրցատարածություններ՝ 1 կմ մանկական վազք, 5 կմ, 10 կմ, 4x2.5 կմ փոխանցումավազք, 21.1 կմ
- Ժամանակային սահմանափակում՝ 4 ժամ

3. Միջոցառման ժամանակացույց – 2025 թ. սեպտեմբերի 14

07:00 – Ավտոբուսների մեկնում Երևանից Վանաձոր
08:00 – Մեկնարկային տարածքի բացում
08:55 – Տաքացման վարժություններ
09:00 – 1 կմ մանկական վազքի մեկնարկ
09:30 – 21.1 կմ, 5 կմ, 10 կմ և 4x2.5 կմ մեկնարկ
12:15 – Մրցանակաբաշխություն
12:30 – Համերգային ծրագիր
14:00 – Միջոցառման փակման արարողություն, ավտոբուսների վերադարձ Երևան

4. Մասնակիցներ

- Մասնակցությունը բաց է բոլոր մասնակիցների համար՝ ելնելով հետեւյալ տարիքային սահմանափակումից.
  - 1 կմ մանկական վազք՝ 3-12 տարեկան (մինչև 7 տարեկանները պետք է ուղեկցվեն ծնողի կողմից)
  - 5 կմ և 4x2.5 կմ փոխանցումավազք՝ 13 տարեկանից բարձր
  - 10 կմ՝ 16 տարեկանից բարձր
  - 21.1 կմ՝ 18 տարեկանից բարձր
- Տարիքային սահմանափակման և տարիքային խմբերի համար մասնակցի տարիքը հաշվարկվում է 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:
- Մեկնարկային փաթեթը ստանալու համար մասնակիցը պետք է ստորագրի հայտարարություն, որով կազմակերպիչները ազատվում են առողջությանը կամ անձնական վնասվածքին վերաբերող պատասխանատվությունից:
- Մասնակիցների առավելագույն քանակը՝ 500 վազորդ:

- Կազմակերպիչները տրամադրում են տեղափոխում Երևանից Վանաձոր և հետ՝ լրացուցիչ 4’000 ՀՀ դրամ վճարման դիմաց:

5. Գրանցում

- Գրանցումը կատարվում է առցանց՝ www.armeniamarathon.org կայքով:
- Գրանցումը փակվում է 2025թ. սեպտեմբերի 13-ին կամ ավելի վաղ՝ ազատ տեղերի լրացման դեպքում:
- Գրանցումը համարվում է ավարտված միայն առցանց ձևը լրացնելուց և մասնակցության վճարը հաջողությամբ կատարելուց հետո:

6. Գրանցման կարգ

- Մասնակիցը լրացնում է գրանցման ձևը և ստանում հաստատման էլ. նամակ:
- Վճարի ստացումից հետո մասնակիցը ավելացվում է վազորդների վերջնական ցուցակում:

7. Մրցահամարի տրամադրում

- Մրցահամարը տրվում է մեկնարկային փաթեթի ստացման պահին:

8. Մասնակցության վճարներ

- 1 կմ մանկական վազք՝ 1’000 ՀՀ դրամ
- 5 կմ՝ 4’000 ՀՀ դրամ
- 4x2.5 կմ փոխանցումավազք՝ 20’000 ՀՀ դրամ թիմի համար
- 10 կմ՝ 7’000 ՀՀ դրամ
- 21.1 կմ՝ 10’000 ՀՀ դրամ
- Բոլոր ավտոբուսով մեկնող մասնակիցները պետք է կատարեն վճարումը մինչև 2025թ. սեպտեմբերի 7-ը: Տրանսպորտի վճարը կազմում է 4’000 ՀՀ դրամ՝ Երևան-Վանաձոր-Երևան, և ներառված չէ մասնակցության վճարի մեջ:
- Մասնակցության վճարը ներառում է՝ տեխնիկական մարզաշապիկ, մասնակցի մեդալ, ճշգրիտ ժամանակի չափում, ջրի կետեր:
- Մրցույթի չեղարկման դեպքում, եթե այն տեղի է ունենում կազմակերպիչներից անկախ պատճառներով, մասնակցության վճարը չի վերադարձվում:
- Մասնակցության վճարը չի վերադարձվում:

9. Մրցափաթեթի ստացում

- Մեկնարկային փաթեթը ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր կամ նույնականացնող այլ փաստաթուղթ:
- Մեկնարկային փաթեթների տրամադրումը կիրականացվի 2025թ. սեպտեմբերի 13-ին (մանրամասները կտրամադրվեն լրացուցիչ):

10. Առաջին բուժօգնություն եւ ջրի կետեր

- Առաջին բուժօգնության կետը հասանելի կլինի մեկնարկ/ավարտ գոտում: Վազքի ընթացքում, եթե տեսնում եք վնասված մասնակից, տեղեկացրեք բժշկական անձնակազմին կամ կազմակերպիչներին:

- Ջրի և սննդի կետերը կլինեն յուրաքանչյուր 3-4 կմ անցնելուց հետո:

11. Որակազրկում

- Կազմակերպիչները կամ մրցավարները կարող են որակազրկել այն մասնակիցներին, ովքեր չեն հետևում կանոններին, խանգարում են մյուսներին, դրսևորում ագրեսիվ կամ ոչ պատշաճ վարք, կամ որևէ այլ կերպ խաթարում են միջոցառման բարեհաջող ընթացքը:

12. Ժամանակագրություն եւ արդյունքներ

- Միջոցառումը կիրականացվի ժամանակագրական ճշգրիտ սարքավորումների միջոցով:

13. Մրցանակներ

- Մրցատարածությունը ավարտող բոլոր վազորդները կստանան մեդալ:
- Անհատական մրցաշարերում տղամարդկանց և կանանց առաջին երեք տեղերը կպարգևատրվեն մրցույթի հովանավորների կողմից:
- Մրցանակի հանձնմանը չներկայանալու դեպքում կազմակերպիչները կարող են տնօրինել այն իրենց հայեցողությամբ:

14. Լուսանկարահանում

- Կազմակերպիչները պահպանում են միջոցառման ընթացքում արված լուսանկարներն ու տեսանյութերը ըստ իրենց հայեցողության օգտագործելու իրավունքով:

15. Բողոքներ

- Բոլոր բողոքները պետք է ներկայացվեն գրավոր՝ գլխավոր մրցավարին կամ info@armeniamarathon.org էլեկտրոնային հասցեով, մինչև 2025թ. սեպտեմբերի 15-ը ներառյալ:

16. Առողջության հարցեր

- Մասնակիցները պարտավոր են ստորագրել հայտարարություն, որով կազմակերպիչները ազատվում են մասնակցի կողմից առողջական վնաս ստանալու պատասխանատվությունից: